Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի միջոցով ստացուած՝ Խարբինից, պ. Գրձելեանից յօգուտ հայ կամաւորների 165 ռուբլի, Կերչի քաղաքապետից յօգուտ գաղթականաց — 2015 ռուբլի և Սրմաւրի Հայոց Բարեգործական Ընկերութիւնից 400 ռուբլի (որից 200 ռուբլին յօգուտ գաղթականաց, իսկ 200 ռուբլին յօգուտ որբ երեխաների ապաստարանին), պատուիրելով մուծել մտից մասեան առանձին-առանձին և իւրաքանչիւրին առանձին անդորրագիր ուղարկել։ 30 մայիսի, թ. 942։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Կոնդակ Մակուի Տ. Արսէն քահանայի անունով, որով, Ատրպատականի թեմական Առաջնորդի միջնորդութեան համաձայն, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք տրուեց։ 2 մայիսի, թ. 779։

ԿԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ.

Սինօդը՝ լսելով Վրաստանի Կոնսիստորիայի 1914 թ. մարտի 12-ի, թ. 1254 յայտարարութիւնը — 1913 թ. վիճակային և օտարին արդեանց մատեանների գնութեան մասին՝ որոշեց. պատուիրել Վրաստանի և Իմերեթի Կոնսիստորիային նախ՝ անմիջապէս փոխադրել Սինօդ թէ 1913 թ. և թէ 1914 թ. վիճակային արդեանց ցնացորդները, երկրորդ՝ ստանալ Տփխիսի եկեղեցիների հոգաբարձութիւնից Տ. Մեսրոպ եպիսկոպոսի ընդունելութեան համար փոխարինաբար վճարած յիսուն (50) ռուբլին և մուտք գրել 1915 թ. մատեանում. երրորդ՝ անմիջապէս ուղարկել Տպարանի Վարչութեան տպարանական բոլոր գումարները. չորրորդ՝ ճշտութեամբ կատարել Սինօդի 1911 թ.

մարտի 16-ի օրագրի իմաստը, որ վերաբերում է ուղարկուելիք գումարներին, հինգերորդ՝ պատուիրել Տ. Մեսրոպ եպիսկոպոսին Սինոդ ուղարկել իւր աւելորդաբար ստացած 63 ռ. 33 կոպ. գումարը և վեցերորդ՝ ի նկատի ունենալով, որ մնացած մասերում հաշիւները կանոնաւոր են, այս գործը կարճել։ 22 մայիսի, թ. 194։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան մայիսի 18-ի, թ. 873 մակագրութիւնը՝ որոշեց· պատուիրել Մայր Աթոռի դանձապահին տալ Նորին Սրբութեան մակագրական հրամանի համաձայն ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին գաղթականաց գումարից երեսուն հազար (30,000) ռուբլի՝ գաղթականների կարիքները հոգալու համար։ 22 մայիսի, թ. 197։

Սինոդը՝ լսելով Վրաստանի Կոնսիստորիայի 1914 թ. դեկտ. 31-ի, թ. 6492 յայտարարութիւնը՝ Կիւրեղ Տէր Յարութիւնեանին Ախալքալակի գաւառի Բզաւէթ գիւղի ծխականների համար քահանայ ձեռնադրելու մասին՝ որոշեց· պատուիրել Վրաստանի Հ. Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Ախալքալակի գաւառի Բզաւէթ գիւղի բնակիչ Կիւրեղ Տէր Յարութիւնեանին և առաջադրել թեմի Առաջնորդին ձեռնադրել յիշեալ Տէր Յարութիւնեանին քահանայ Բզաւէթ գիւղի վերայ։ 22 մայիսի, թ. 200։

Սինոդը՝ լսելով Խանքենդի ծխատէր Պետրոս քահանայ Տէր Յովհաննիսեանին Շուշու ս. Յովհաննէս եկեղեցու ծխականների հովիւ հաստատելու մասին՝ որոշեց· յարգելով ծխականների միջնորդութիւնները, ճանաչել Պետրոս քահանային Շուշու Վերին Թաղի ս. Յովհաննէս եկեղեցում քահանայ, առաջադրելով նրան Դանիէլ քահանայի վերաբերեալ յանձն առած իւր պարտաւորութիւնները անթերի կատարել։ Վճռիս մասին ամբողջութեամբ հրամանագրել Կոնսիստորիային։ 22 մայիսի; թ. 201։

Սինոդը՝ լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի 1915 թ. մարտի 16-ի, թ. 609 յայտարարութիւնը—Արտաշէս Տէր Յովսէփեանին Արէշի գաւառի Նիժ գիւղի ծխականների

համար քահանայ ձեռնադրելու մասին՝ որոշեց. պատուիրել Ղարաբաղի կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Մեծ Սեօղուտլու գիւղի բնակիչ Արտաշէս Տէր Յովսէփեանին և ի նկատի առնելով, որ թեմում եպիսկոպոս չկայ՝ առաջադրել Մայր Աթոռի միաբան Տ. Աշոտ եպիսկոպոսին ձեռնադրել Տէր Յովսէփեանին քահանայ Նիժ գիւղի վրայ։ 27 մայիսի, թ. 203։

Սինոդը՝ լսելով Մոզդոկի Խորէն քահանայ Շահինեանի մեղադրական գործը—Մոզդոկեցի օր. Եւա Հնդիկեանին 14 տ. 5 ամս. 19 օրական հասակում պսակելու առթիւ՝ որոշեց. Հնդիկեանի պսակը համարել վաւերական, բայց ի նկատի ունենալով, որ Շահինեան քահանան պսակել է Հնդիկեանին խախտելով պատժ. օր. 1563 և 1575 յօդուածների տրամադրութիւնը, յանձնել Մոզդոկի Շահինեան քահանային ի դատ մարմնաւոր իշխանութեան, որի համար և հրամանագրել կոնսիստորիային, վերադարձնելով քննական գործը։ 29 մայիսի, թ. 205։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան մարտի 24-ի, թ. 484 մակագիր հրամանը—11305 ռուբլին, փոխադրուած Ամերիկայի Բոստոն քաղաքից, «Հնչակեան» հայ կամաւորներին ուղարկելու մասին՝ որոշեց. համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի մակագրութեան այս տարուայ մարտի 24-ի, թ. 484 մակագրութեամբ Սինոդ յանձնած և յօգուտ գաղթականաց մուտք գրուած 11305 ռ., որ փոխադրուած է Ամերիկայի Բոստոն քաղաքից, անմիջապէս փոխադրել Տփխիս Համբարձում Առաքելեանին ըստ պատկանելոյն յանձնելու համար։ 29 մայիսի, թ. 207։

Սինոդը՝ լսելով Ներքին Գործերի Տ. Նախարարի մայիսի 13-ի, թ. 3151 առաջադրութիւնը—Եկատերինոսլաւի նահանգի Ալէքսանդրա գիւղում հայոց աղօթատուն շինելու մասին՝ որոշեց. ուղարկելով Տ. Նախարարի թ. 3151 առաջադրութեան պատճէնը, պատուիրել Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիային կարգադրել տեսել Ալէքսանդրա գիւղի աղօթատան շինութիւնը։ 1 յունիսի, թ. 214։

Սինոդը՝ լսելով Սահակ քահանայ Տէր Յովհաննիսեանին Կիպրուոդակի հայ համայնքի համար հովիւ կարգելումսին՝ որոշեց. ի նկատի ունենալով, որ ա) առաջին անգամ Կիպրուոդակի ծխական ժողովի ընտրած քահանայ Օրդուխանեանին թեմի Առաջնորդի կողմից չհաստատելուց յետոյ երբ երկրորդ անգամ ուրիշ քահանայի ընտրութիւն է կայանում, ինքն ըստ ինքեան առաջին ընտրութիւնը առ ոչինչ է համարուել, հետևաբար Ատրպատականի թեմի Առաջնորդ Մխիթար եպիսկոպոսի կողմից Օրդուխանեանին Կիպրուոդակի ծխատէր քահանայ նշանակելը չի համապատասխանում ծխակ. կանոն. պահանջներին, ուստի և բեկանելի է. բ) քանի որ համաձայն ծխ. կանոն. քահանայ ընտրում է համայնքը և Կիպրուոդակի ծխականները ընտրել են Սահակ քահանայ Տէր Յովհաննիսեանին, որին Ստաւրոպոլի համայնքը իր հերթին արձակել է Ստաւրոպոլի ծխատէր քահանայի պարտաւորութիւններից, և չկայ որ և է այլ արգելք յիշեալ քահանային Կիպրուոդակում քահանայագործելու, ուստի թեմական Առաջնորդը, համաձայն օր. XI հատ. I մ. 1171, 1173 և 1177 յօդուածների, պէտք է ընդառաջ գնար ժողովրդի ցանկութեան՝ առաջադրել Առաջնորդին, բեկանելով Օրդուխանեանին Կիպրուոդակում քահանայ նշանակելը՝ հաստատել Սահակ քահանայ Տէր Յովհաննիսեանին ծխատէր քահանայ Կիպրուոդակում։ 1 յունիսի, թ. 215։

Սինոդը՝ լսելով Վրաստանի Կոնսիստորիայի մարտի 6-ի, թ. 1134 յայտարարութիւնը—Նոր-Բայազիտի գաւառի Քեօլագուան գիւղացի Տիգրան Մուրադեանին Ղազախի գաւառի Թաթլու գիւղի համար քահանայ ձեռնադրելու մասին՝ որոշեց. պատուիրել Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Նոր-Բայազիտի գաւառի Ն. Քեօլագուան գիւղի բնակիչ Տիգրան Մուրադեանին և առաջադրել թեմի Առաջնորդին ձեռնադրել յիշեալ Մուրադեանին քահանայ Ղազախի գաւառի Թաթլու գիւղի վրայ։ 1 յունիսի, թ. 216։

Սինոդը՝ լսելով Կովկասի Տ. Փոխարքայի այս տարուայ

մայիսի 15-ի, թ. 13745 գրութիւնը – Գեօկչայ աւանում հայ-Լուսաւորչական աղօթատուն շինելու մասին՝ որոշեց. ուղարկելով Կովկասի Տ. Փոխարքայի վերոյգրեալ թ. 13745 գրութեան պատճէնը, պատուիրել Շամախու Կոնսիստորիային կարգադրել սկսել Գեօկչայ աւանի աղօթատան շինութիւնը։ Հաստատուած յատակագծի պատճէնը, նախահաշիւը և նուիրատուների ցուցակը վերադարձնել։ 1 յունիսի, թ. 217։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան անցած մայիսի 29-ի, թ. 932 մակագրութիւնը՝ որոշեց. պատուիրել Մայր Աթոռի Գանձապահին տալ, համաձայն Նորին Սրբութեան մակագրութեան, ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարդադիր Յանձնաժողովին գաղթականաց գումարից յիսուն հազար (50,000) ռուբլի։ 1 յունիսի, թ. 218։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան յունիսի 3-ի, թ. 952 մակագիր պատուէրը՝ որոշեց. պատուիրել Մայր Աթոռի Գանձապահին, համաձայն Նորին Սրբութեան մակագրութեան, հեռագրով փոխադրել Տփխիս «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելեանին 17,353 ռուբլի 75 կոպ. «Հնչակեան» կամաւորների 6-րդ դրուժինային յանձնելու համար։ 3 յունիսի, թ. 219։

Սինոդը՝ լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի 1914 թ. դեկտ. 12-ի, թ. 3391 յայտարարութիւնը, որով ներկայացրել է ի գնութիւն իւր 1913 թ. դրամական մուտից և ելից մատեանները՝ որոշեց. ընդունելի համարել Ղարաբաղի Կոնսիստորիայի 1913 թ. ել և մուտից մատեանների ծախքերը, իսկ ինչ վերաբերում է նախահաշուից դուրս արած աւելորդ ծախքերին, նկատել Կոնսիստորիային և վերջին անգամ զգուշացնել, որ ապագայում այսպիսի ծախքեր չարուեն առանց Սինոդի կանխագոյն թոյլտուութեան։ 5 յուլիսի, թ. 222։

Սինոդը՝ լսելով Վաղարշապատի վերաբնակչուհի քըրդուհի Խաթուն Հաջի Ղզիի խնդիրը—իրեն Հայաստանեայց եկեղեցու ծոցն ընդունելու մասին՝ որոշեց. պատուիրել

Երևանի Կոնսիստորիային կարգադրել մկրտել Հայաստանեայց եկեղեցու ծիսով քրդուհի Խաթուն Հաջի Ղզուն, որ վերաբնակուում է Վաղարշապատ գիւղում, Յովսէփ Գէորգեանի տանը։ 5 յունիսի, թ. 224։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան մայիսի 29-ի, թ. 936 մակագրութիւնը—Թոփտի գիւղի Էմմանուէլ քահանայ Հաջիեանի ս. Էջմիածնի ճեմարանին իւրաքանչիւր տարի 100 ռուբլի նուիրաբերելու մասին՝ որոշեց. նախ՝ պատուիրել Սինոդիս Հաշուարարական Մասին առանձին երես բանալ Էմմանուէլ քահանայ Հաջիեանի նուիրաբերութեան համար, որ և պահանջել նորանից իւրաքանչիւր ուսումնական տարուայ սկզբին Նոր-Նախիջևանի փոխանորդի միջոցով։ Եւ երկրորդ՝ յանձնարարել ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի Վարչութեան յիշեալ քահանայի տարեկան 100 ռուբլի նուէրը մտցնել ճեմարանի իւրաքանչիւր տարուայ նախահաշուի մէջ։ 10 յունիսի, թ. 233։

Սինոդը՝ լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի այս տարուայ մարտի 16-ի, թ. 611 յայտարարութիւնը—Շուշու գաւառի Ռև գիւղացի Արշակ Աթաքեխայեանին նոյն գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու մասին՝ որոշեց. թոյլ տալ Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Շուշու գաւառի Ռև գիւղի բնակիչ Արշակ Աթաքեխայեանին և առաջադրել Մայր Աթոռի միաբան Տ. Ղևոնդ եպիսկոպոսին ձեռնադրել յիշեալ Աթաքեխայեանին քահանայ նոյն Ռև գիւղի վրայ։ 10 յունիսի, թ. 234։

Սինոդը՝ լսելով Մելիտոպոլ քաղաքի բնակիչ Գէորգ Կարամուրզայեանի կտակը՝ որոշեց. նախ՝ պատուիրել Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմական Առաջնորդին հանգուցեալ Գէորգ Կարամուրզայեանի դատարանով հաստատուած 1914 թ. մարտի 2-ի կտակից պատճէններ տալ Հին Խրիմի հայոց եկեղեցական-ծխական դպրոցի Հոգաբարձութեանը և նոյն տեղի հայ հոգևորականութեանը և հակել, որ կտակի երկրորդ յօդուածի առաջին կէտի մէջ յիշուած 6000 ռուբլին յանձնուի դրամատուն, տոմսը

պանուի Կոնսիստորիայի գրամարկղում, իսկ տոկոսները գործադրուին համաձայն կտակարարի կամքի։ Երկրորդ՝ կտակուած 10000 ռուբլու մասին տեղեկութիւն տալ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան։ 10 յունիսի, թ. 235։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան մայիսի 29 ի, թ. 940 մակագրութիւնը – Համգաշիմանի, Բուղդաշէնի և այլ գիւղերի ծխ. դպրոցներին նպաստ տալու առթիւ՝ որոշց. համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի մակագրութեան պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին տալ Դպրոցական Ֆոնդի տոկոսներից 1000 ռուբլի նպաստ, Երևանի փոխ–թեմակալի միջոցով, Համգաշիմանի, Բուղդաշէնի, Մօլլա–Բայազիտի, Աւանի, Արամուսի և Առինջի եկեղ. ծխական դպրոցներին։ 15 յունիսի, թ. 246։

Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի 1913 թ. նոյեմբերի 26-ի, թ. 8123 յայտարարութիւնը—Աղէքսանդրապոլի վիճակի Թումարտաշ գիւղի Գրիգոր քահանայ Տէր Կարապետեանի մեղադրական գործի մասին՝ որոշց. պատուիրել Երևանի Կոնսիստորիային անմիջապէս ուղարկել Թումարտաշի Գրիգոր քահանային Խոր–Վիրապ երեք ամիս ապաշխարելու, իսկ եթէ մինչև յուլիսի 15 ը քահանան չլինի իւր ապաշխարավայրում, պատուիրել Կոնսիստորիային կարգալոյծ անել յիշեալ քահանային և այդ վճիռը ներկայացնել Սինոդ ի հաստատութիւն։ 19 յունիսի, թ. 251։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան այս յունիսի 26-ի, թ. 1099 մակագրութիւնը՝ որոշց. պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին, համաձայն Նորին Սրբութեան մակագրութեան, վճարել ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին զաղթականների գումարից, ընթացիկ ծախքերի համար, յիսուն հազար (50000) ռուբլի։ 26 յունիսի, թ. 257։